

ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ-ՕՂԱՆՋԱՆՅԱՆ

Հայագիտությունը մեծ կորուստ ունեցավ: Վախճանվեց ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը. մի մեծություն, որով լցված էր հայրենի հասարակագիտական միտքն ավելի քան կենդանույն մի ժամանակամիջոցում: Արդի հայ բանասիրության, բանագիտության և արևելագիտության պատկառելի ավագանու վերջին ներկայացուցիչներից մեկը վախճանվեց իր կյանքի 77-րդ տարեկիցի նախօրեին՝ 1970 թ. փետրվարի 22-ին, անկատար թողնելով բազում մտահղացումներ:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտությունների վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարապետ (Կարո) Աղաբեկի Մելիք-Օհանջանյանը ծնվել է 1893 թ. փետրվարի 20-ին (հին տոմարով) Մեղրու շրջանի Կալեր գյուղում, Բարձրագոյն կրթությունն ստացել է ժամանակի ամենանշանավոր դպրոցներից մեկում՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում: Ավարտելուց հետո Կ. Մելիք-Օհանջանյանը գիտական ուսումնառությունը շարունակում է Գերմանիայում, որտեղ աշակերտում է մի շարք նշանավոր արևելագետների և բանասերների: Նրա մշտական գիտական ղեկավարն ու աշակիցն էր Հայաստանի անկեղծ բարեկամ, համրավավոր արևելագետ, հայագետ պրոֆ. Յոզեֆ Մարկվարտը:



Տարբեր մասնագետներից սովորելով հին ու սոր մի քանի լեզուներ, ծանոթանալով գաղափարական ժողովուրդների գրավոր ու բանավոր մշակույթներին, ձեռք բերելով հայրենի գիտությանը ծառայելու համար բարձր պատրաստություն՝ Կ. Մելիք-Օհանջանյանը արտասահմանից վերադառնում է հայրենիք և անմիջապես նվիրվում հայ գիտությանն ու մշակույթին: Նա եղել է խորհրդային Հայաստանի անդրանիկ գիտահետազոտական հաստատության էշմիածին գիտական ինստիտուտի նախագահը, Հայաստանի կուլտուրայի պատմության, պատմության և գրականության ինստիտուտների գիտական քարտուղարը, հայոց հին դրականության և ժողովրդական բանահյուսության սեկտորների վարիչը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի գիտական խորհուրդների մշտական անդամը:

Գիտական գործունեությանը զուգընթաց Կ. Մելիք-Օհանջանյանը նվիրվում է հայ սերնդի կրթության ու դաստիարակության գործին, մայրաքաղաքում վարում է լուսարժավարի, Մյասնիկյանի անվան դպրոցի ուսման վարի և ուսուցչի պաշտոններ, դառնում է Երևանի համալսարանի անդրանիկ դասախոսներից մեկը, զասավանդում է մանկավարժական ինստիտուտում, պատրաստում է հայագետներ, ղեկավարում է ասպիրանտներին:

1935 թ. Կ. Մելիք-Օհանջանյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում, իսկ 1965 թ. նա ընտրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Բարձր գնահատելով Կ. Մելիք-Օհանջանյանի գիտական վաստակը՝ Հայաստանի կառավարությունը նրան շնորհել է գիտությունների վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Բազմաճյուղ են անվանի հայագետի գիտական հետաքրքրությունները: Հատկապես մեծ է նրա դերը համաշխարհային նշանակություն ունեցող հայ ժողովրդական էպոսի՝ «Սասնա ծռերի» պատումների գրաման, գիտական ուսումնասիրության, հրատարակության և թարգմանության

գործում: Նշանավոր բանադետր Հայ իրականության մեջ առաջին անգամ հայտնաբերել և հրատարակել է «Սասունցի Դավթի» երկու պատում՝ բուն Սասունի բարբառով, լսված բնիկ սասունցիներից: Նրա ջանքերով գրանցված ու հրատարակված ես վեց պատումների շարքում է նաև այլազան տեղի նշանավոր բանասաց Մանուկ Թորոյանի պատումը: Հայ մեծ գիտնական Մ. Արեղյանի հետ միասին Կ. Մելիք-Օհանջանյանը հանդիսացավ հայ ժողովրդական էպոսի գիտական ուսումնասիրության հիմնադիրը: Նրա հետ միասին հավաքեց, դասակարգեց և խմբագրեց շուրջ 78 պատումներ, դրեց «Սասնա ծռերի» հիմնադիր հատորի ընդհանուր ներածականը, նվիրված վեպի ծագմանն ու այլ հարակից հարցերի: Կարծյալ Մ. Արեղյանի հետ միասին նա պատրաստեց ներածություններ էպոսի առանձին բարբառային խմբերի համար և գիտական գերազանց մակարդակով հրատարակեց «Սասնա ծռերի» առաջին հատորը: Մ. Արեղյանի մահից հետո Կ. Մելիք-Օհանջանյանը հրատարակեց «Սասնա ծռերի» մնացած պատումները, նրանց կցեկով վեպի տարածման աշխարհագրական քարտեզը և ճյուղագրությունը:

«Սասնա ծռերի» մեծ երախտավորը բախա շունեցավ հրատարակված տեսնելու էպոսի 10 լավագույն պատումների գրեթե 23 հազար մարզարտաշար տողերից բաղկացած ուսերեն թարգմանությունը, որը նա կատարում էր տարիներ շարունակ, մեծ ջանասիրությամբ ու սիրով և որը շուտով միջազգային բանագիտությանը կներկայանա (հայերեն բնագրով և գիտական մեկնաբանություններով հանդերձ) Մոսկվայի Մաքսիմ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի և Հայաստանի համապատասխան հաստատությունների համատեղ հրատարակությանը: Կ. Մելիք-Օհանջանյանն իր իմաստուն խորհուրդներով օգնել է «Սասունցի Դավթի» մեր ղեկավարում կատարվող ու կատարված այլազան թարգմանությունների (անգլերեն, ֆրանսերեն, լեհերեն, էստոներեն) գործին:

«Սասնա ծռերին» նվիրաբերած գործունեությունից բացի Կ. Մելիք-Օհանջանյանը իր հմուտ գրչին ու խորը գիտելիքները ներդրել է հայ հին դրականության, բանասիրության, աղբյուրագիտության, բնագրերի ուսումնասիրության ու հրատարակության և հայագիտական զանազան այլ մարզերի հարստացման գործում: Նրա գրչի արգասիքներն են. «Յիրդուսին և Իրանի վիպական մոտիվները Շահնամեում և հայ մատենագրության մեջ», «Ռոստամ-Ջալ հայ-իրանական ժողովրդական վեպը», «Լեհերեն խորհրդային ֆոլկլորի մեջ», «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բյուզանդի», «Հայ ֆոլկլորը և հին գրականությունը», «Էջեր միջնադարյան արձակից», «Խորենացու Հայոց պատմության երկու պատուհի», «Միթրա Միհրը Սասնա ծռերի մեջ», «Ազաթանդեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջը» և այլ աշխատություններ: 13-րդ դարի նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության», «Պատմություն Փարիզի և Վիննայի» միջնադարյան պոեմի, խաչատուր Թոխաթցու «Վենետիկի պատմության» քննական հրատարակությունները նույնպես Կ. Մելիք-Օհանջանյանի մեծարժեք վաստակներից են:

Կ. Մելիք-Օհանջանյանը ուժեղ բնավորության տեր, ազնիվ, շիտակ, հմայիչ, ինքնատիպ մարդ էր: Ծանոթներն ու անծանոթները նրա հյուրընկալ հարկը տակ շատ շուտ թոթափում էին իրենց կաշկանդող ազնվամիտական լրջությունը, որից հետո սկսվում էր «պարտադիր կարգով» միշտ ուրախ դրույցը նույնիսկ ամենամոռաց հարցերի ու ամենալուրջ գիտական խնդիրների շուրջը: Ակադեմիկոսը սրտաբաց օգնություն էր ցույց տալիս բոլոր իրեն ղեկավարներին: Իսկ նրան դիմում էին գրականագետներ, պատմաբաններ, ազգագրագետներ, բանագետներ, արվեստաբաններ, թարգմանիչներ... Նա մի կենդանի հանրագիտարան էր, բոլորի համար հոգատար ու սրտացավ խորհրդատու:

77 տարիների բարդ կյանքը նա անցավ բաց ճակատով և մեր սրտերում թողեց իր գիտական ու մարդկային հմայքի հարատև հիշատակը: Մեծանուն գիտնականի կտակած անտիպ գործերի հրատարակությունը կհանդիսանա նրա հիշատակի հավերժացման ամենալավ արտահայտությունը:

ԳԵՎՈՐԳ ԱՐԳԱՐՏԱՆ